

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ձեռագրի իրավունքով

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ ԲԱԲԿԵՆԻ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԵՎ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ
ԴԵՐԸ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

(19-րդ դարի երկրորդ կես)

Մասնագիտությունը - Հայոց պատմություն - Է.00.01

Պատմական գիտությունների քեկնածուի զիաական
ատաիճանի հայցման աաենախաաություն

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 1997

Աշխատանքը կատարվել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Ռուսաստանի պատմության ամբիոնում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Գ. Ա. ԳԱԼՈՅԱՆ

պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ

Առաջատար կազմակերպություն

Երևանի պետական համալսարանի
Հայոց պատմության ամբիոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է «21» — X — 1997 թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհող 004 մասնագիտական խորհրդի նիստում (375019, Երևան, Մարշալ Բաղրամյան 24 գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է «16» — IX — 1997 թ.

Մասնագիտական խորհրդի գիտական

քարտուղար, պատմական

գիտությունների թեկնածու

Վ. Ա. ՄԵԼԻՔՆՅԱՆ

Դուք պարծաղեցրեցի
մաքսակաշառք հրախալալու,
ակադեմիկոս Գ. Մ. Սարգսյանին

Գ. Դ. Մանուկյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ. - Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության և համագործակցության ձևավորման ու զարգացման տարբեր վուլերում կուտակված պատմական վործի համակողմանի րուսաբանմը մեր պատմագիտության կարևոր և արդիական խնդիրներից է: Ելնելով ժողովուրդների բարեկամության ու մշակութային կապերի պատմության հարցերի րուսաբանման կարևորությունից ու արդիականության պահանջներից՝ ուսումնասիրման թեմաները ընտրել Ռուսաստանի համալսարանների՝ հայ մտավորականության պատրաստման գործում խաղացած դերի բացահայտման խնդիրը՝ հիմնական ուշադրությունը րևեռելով Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանների ու նրանցում ուսանած հայ ուսանողների ուսման և հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի վրա: Նշված համալսարանները շահեկանորեն առանձնանում էին մյուս համալսարաններից ինչպես դրանցում ուսանած հայ ուսանողության թվով, այնպես էլ հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում խաղացած դերով:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման հետևանքով հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած վորվորությունների և դրանց հետ կապված հայ-ռուսական մշակութային կապերի նոր վուլի սկսման գործոնով են պայմանավորված աւտենախոսության ժամանակագրական շրջանակները:

Մեքենայական աեխնիկայի վրա հենվող կուլիտախատական արտադրությունն անհրաժեշտ որակյալ կապրերով ապահովելու համար ցարական կառավարությունը դեռ 19-րդ դարի սկզբից ձեռնամուխ է լինում բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցի ընդլայնմանը, որն ավելի լայն չափեր ընդունեց 19-րդ դարի երկրորդ կեսին: Չնայած բարձրագույն կրթության բնագավառում ցարիզմի որ-

1 19-րդ դարի առաջին կեսին մեկը մյուսի ետևից բացվեցին Դորպատի (1802թ.), Կազանի (1804թ.), Խարկովի (1805թ.), Վարշավայի (1816թ.), Պետերբուրգի (1819թ.), Կիևի (1834թ.), համալսարանները: 19-րդ դարի երկրորդ կեսին դրանց ավելանում են Նովոռոսիայի (Օդեսայի) (1865թ.), Տոմսկի (1880թ.) համալսարանները:

դեպքում դասային քաղաքականությանը՝ արդեն դարի կեսերին կառավարությունն ստիպված էր հաշվի նստել այն հանգամանքի հետ, որ փոքրաթիվ ազնվականությունը և նորերով բուրժուազիան չեն կարող լիովին բավարարել զարգացող կապիտալիստական տնտեսության պահանջները: Եվ պատահական չէր, որ 1863 թ. համադարսնական կանոնադրությամբ բարձրագույն կրթությունը համեմատաբար մատչելի դարձավ նաև հասարակության այլ խավերի ու կայսրության այլ ազգերի երիտասարդության համար: Բարձրագույն կրթության զարգացման այս միտումները հատկապես կարևորվում էին հայ երիտասարդության համար, քանի որ քննության առնվազն ժամանակաշրջանում ոչ Հայաստանում, ոչ էլ ողջ Անդրկովկասում գոյություն չուներ և ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն: Այսպիսով, ռուսական համալսարանները, որոնք տալիս էին բազմակողմանի և որակյալ կրթություն, օբյեկտիվորեն դարձել էին նաև հայ մտավորականության պատրաստման կրթօջախներ: Նրանք խոշոր դեր խաղացին նաև հայ և ռուս ժողովուրդների հասարակական-քաղաքական, մշակութային և գիտական կապերի զարգացման ասպարեզում, կապեր, որոնք նախքան շրջանի համեմատ ձեռք բերեցին նոր գծեր, դարձան ավելի կանոնավոր և կայուն:

ԹԵՍՍԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱԳՐՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԸ. - Նախախորհրդային պատմագրությունը բարձրագույն կրթության բնագավառում հայ-ռուսական կապերի պատմությանը անողորակի կերպով անդրադարձել է հիմնականում առանձին բարձրագույն կրթական հիմնարկների պատմությանը նվիրված աշխատություններում²: Վիճակագրական բնույթի տեղեկություններ են պարունակում համալսարանների տարեկան ակտերն ու հաշվեալությունները, տասնյակների և դասախոսների անվանական ցուցակները: Վերոհիշյալ աշխատություններում, սակայն, գրեթե լիովին բացակայում են հայ ուսանողության հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին վերաբերող տեղեկությունները: Խնդրա առարկա պայրերն էր և լուսարանված նաև հայ-ռուսական մշակութային կապերին նվիրված արդի գրականության մեջ: Պարբերիկն այս կամ այն առումով հպանցիկորեն անդրադարձել են հայ մի շարք

² Санкт-Петербургский университет в первое столетие его деятельности. 1819-1919 гг. Материалы по истории Санкт-Петербургского университета. Под ред. С. В. Рождественского. Петроград, 1919. Императорский Санкт-Петербургский университет в течение первых пятидесяти лет его существования. Историческая записка. Григорьев В. В. СПб., 1870. Петербургский университет. Факультет восточных языков. Обзор деятельности факультета 1855-1905 гг. В 4-х томах. Составил проф. Бартольд. СПб., 1905. История императорского Московского университета, написанная к столетию его юбилею ординарным профессором русской словесности и педагогики. С. Шевырев. 1755-1855. М., 1855. Шимановский М. В. Мои профессора и мое студенчество. Одесса, 1892. Дубровский А. В. Сведения по статистике народного образования в Европейской России. 1872-1874 гг. СПб., 1878. Его же. Университеты и средние учебные заведения в 50-ти губерниях Европейской России. СПб., 1888. Маркевич А. С. 25-летие Императорского университета. 1865-1890. Одесса, 1898.

պատմաբաններ, սակայն բուն պայրերն, նրանց ռատմնասիրման շրջանակները դուրս է մնացել: Պարբերիկն լուսարանման համար դրական նշանակություն ունենալ և առանձին համալսարանների պատմությանը նվիրված վերջին տասնամյակների մի շարք հրատարակություններ⁴: Սակայն դրանցում ևս առանձին ազգերի ուսանողության կյանքին, ուսումնառությանը և հետագա գործունեությանը վերաբերող հարցերն ամենևին պատշաճ լուսարանում չեն զանել: Այս առումով արժեքավոր աշխատանք է կատարել պրոֆ. Ա. Ա. Արշալույսին, որն իր «Մոսկվայի համալսարանը և հայ առաջավոր մտավորականությունը» Եր., 1982 թ. «Մոսկվայի համալսարանի հայ ուսանողությունը» Եր. 1955, աշխատություններում ավել է Մոսկվայի համալսարանի հայ ուսանողության ընդհանուր պատմությունը:

Վերը նշված աշխատությունները չեն ընդգրկում խնդրա առարկա պայրերի հիմնական հարցերը: Դրանցում քվակաճ շատ ավելներ վիճելի են, բացակայում է դրանց մի մասի աղբյուրագիտական հիմնավորումը: Այսպիսով, նախընտրված քեման ստ այսօր չի դարձել հատուկ հետազոտության առարկա: Մույն առեհախառությամբ փորձ ենք արել ըստ հնարավորին լրացնել հայ-ռուսական մշակութային տեղեկությունների պատմության՝ այդ բնագավառում գոյություն ունեցող բացը:

Աշխատանքը շարադրելիս տեղեկություններ ենք քաղել փաստաթղթերի և նյութերի ժողովածուներից⁵, լայնորեն օգտագործել ենք նախկին ԽՍՀՄ-ի զանազան արխիվներում պահվող համալսարանական փաստաթղթերը՝ գիտական շրջանառության մեջ ձևերով շատ նյութեր: Պետերբուրգի համալսարանի և նրա հայ ուսանողության վերաբերյալ շատ նյութեր ենք քաղել Լենինգրադի մարզային պետական արխիվի (Государственный архив Ленинградской области այստեղևակ՝ ГАО)

³ Հովհաննիսյան Ա. Գ., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 2, Եր. 1956, Ներսիսյան Մ. Գ., Նալբանդյանի խմբակներն Անդրկովկասում 1870-1880-ական թթ.: Եր. 1940: Նույնի, Из истории русско-армянских отношений Кн. 1-2. Ер. 1956-1961: Բարխադարյան Վ. Բ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.), Եր. 1985: Գալոյան Գ. Ա., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Եր. 1978: Դարոյան Մ. Գ., Միքայել Նալբանդյան, Եր. 1963: Նույնի, Միքայել Նալբանդյանը և ռուսական հեղափոխական դեմոկրատները, Եր. 1969: Գիլոյան Վ. Ա., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեությունը պատմությունից, Եր. 1966: Գրիգորյան Չ. Տ., Հայ և ռուս ժողովուրդների զարգացող բարեկամությունը, Եր. 1967: Սանքրոյան Մ. Ի., Ներսիսյան դպրոցի պատմություն, Եր., 1964: Թերզիբաշյան Վ. Վ., Հայ դրամատուրգիայի պատմություն, հ. 1-2, Եր. 1959: Арешян С. Г. Армянская печать и царская цензура. Ер. 1957. Оганисян Л. А. История медицины в Армении с древнейших времен до наших дней. Ч. 1-5, Ер. 1946-1947. Григорян К. Н. Из истории русско-армянских литературных и культурных отношений. Ер. 1974.

⁴ История Московского университета. В 2-х томах. М. 1955. Маеродин В. В. Ленинградский университет. Краткий очерк. Л. 1957. История Ленинградского университета. Очерки. 1819-1969 гг. Под ред. В. В. Маеродина. Л. 1969. Казанский университет 1804-1979 гг. Очерки истории. Под ред. Нужейна. Казань. 1979.

⁵ Документы и материалы по истории Московского университета. В 3-х томах М. 1960. Материалы по истории Ленинградского университета. Обзор архивных документов. Под ред. С. Н. Валка. Л. 1961.

թիվ 14, 139, 569 ֆոնդերից, որոնցում պահվում են պրոֆեսորադոսատական կազմի և ուսանողների անձնական գործերը, ուսանողական խմբակների, հայրենակցական միությունների գործունեության մասին վավերագրերը, ինչպես նաև համալսարանական խորհրդի արձանագրությունները, ուսանողական ցուցակները, վարչա-մատյանները, քննական քերթիկները և այլն:

Հայ մշակութային կյանքի, այդ թվում նաև ուսանողների վերաբերյալ կարևոր նյութեր են վերցրել Ռուսաստանի պետական պատմական արխիվի (Российский государственный исторический архив в Петербурге այսուհետև՝ РГИА) թիվ 91, 565, 732, 733, 739, 744, 772, 776, 777, 880, 1263 և 1268 ֆոնդերից: Մոսկվայի համալսարանի վերաբերյալ նյութերը հիմնականում կենտրոնացված են Մոսկվայի կենտրոնական պատմական արխիվի (Центральный государственный исторический архив г. Москвы, այսուհետև՝ ЦГИАМ) թիվ 418 (Մոսկվայի համալսարանի) և թիվ 459 (Մոսկվայի ուսումնական օկրուգի ինքնարարժուական գրասենյակի) ֆոնդերում: Ուսանողական հեղափոխական շարժումների պատմության սկզբնաղբյուրներին ծանոթացել ենք Ռուսաստանյան դաշնության պետական արխիվում (Государственный архив Российской Федерации, այսուհետև՝ ГАРФ): Այս արխիվի ռաիկական և ղեկավարամեծի հատուկ բաժնի ֆոնդերում կենտրոնացված են կայսերական բոլոր համալսարանների ուսանողական հեղափոխական շարժումներին վերաբերվող փաստաթղթերը: Ռուսական համալսարանների հայ ուսանողության, նրա սոցիալական և ռեզիմնալ կազմի, հասարակական-քաղաքական, ազգային և մշակութային գործունեության մասին ընդհանուր գաղափար կազմելու և պատկերը լրացնելու համար ծանոթացել ենք նաև Թաթարստանի Հանրապետության կենտրոնական պետական պատմական արխիվի (Центральный исторический архив Татарской Республики, այսուհետև՝ ЦИАТ) թիվ 977 ֆոնդում պահվող Կազանի համալսարանի պրոֆեսորադոսատական կազմի ծառայողական ցուցակներին և ուսանողության անձնական գործերին, ինչպես նաև Օդեսայի մարզի պետական արխիվի (Государственный архив Одесской области, այսուհետև՝ Одесский обл. архив) թիվ 45 ֆոնդում պահվող Նովոռոսիայի համալսարանի հայ ուսանողության վերաբերյալ եղած փաստաթղթերին:

Ատենախոսությունը շարադրելիս օգտվել ենք ժամանակի հայ և ռուս պարբերական մամուլից, մասնավորապես «Մշակ», «Մորճ», «Գործ», «Մեղու Հայաստանի», «Փորձ», «Колокол», «Санкт-Петербургские ведомости», «Московские ведомости» և այլ պարբերականներից, որոնք հետաքրքիր տվյալներ են պարունակում հայ ուսանողության ուսումնառության, սոցիալական դրության, հասարակական և մշակութային կյանքի և այլ հարցերի վերաբերյալ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՒՄԱՐԱՆԻ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ. - Ատենախոսության մեջ դիմում է կատարված Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանների օրինակով լուսաբանել բարձրագույն կրթության ապարելում հայ-ռուսական հարաբերությունների ընդհանուր բովանդակությունը և բացահայտել այդ համալսարանների

բանների նշանակությունը հայ մատվորականության պատրաստման գործում: Բարձրացված հարցերի համակողմանի քննարկումը ձգտել ենք կատարել՝ երակես ունենալով պատմաբնական մեթոդի սկզբունքները, այն է՝ հասարակական կյանքում տեղի ունեցած երևույթներն ու իրադարձությունները դիտարկել տարածության և ժամանակի մեջ նրանց ունեցած փոխադարձ կապի մեջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. - Աշխատանքում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված նյութերը, կազմված աղյուսակները, արված եզրակացությունները, վիճակագրական տվյալները օգտակար կարող են լինել բարձրագույն կրթության պատմության պրոբլեմով զբաղվող մասնագետների համար, այն մեծապես կօգնի բարձրագույն ուսումնական հաստատությունների պատմության ֆակուլտետներում հատուկ դասընթացներ պատրաստելու և դասախոսելու գործին: Աշխատության գործնական նշանակությունը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի դաշնության միջև զնալով սերտացող բազմակողմանի հարաբերությունների զարգացմամբ:

ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅՈՒՆԸ. - Ատենախոսությունը քննարկվել է և երաշխավորվել պաշտպանության Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի Ռուսաստանի պատմության սմբիոնում, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայ գաղափարների պատմության և նոր շրջանի պատմության բաժինների համատեղ նիստում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը հրապարակվել է հեղինակի երեք հաղվածներում (շուրջ 3 մամուլ ծավալով) և երկու քեզիսներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ. - Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, վերջաբանից և օգտագործված գրականության ու աղբյուրների ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 168 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված է հիմնահարցի արդիականությունը, գիտական նորությունն ու գործնական նշանակությունը, բացահայտված են ատենախոսության նպատակն ու խնդիրները, արված է օգտագործված աղբյուրների ու գրականության տեսությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼԽՈՒՄ «Կրթական գործի զարգացումը արևելահայ իրականության մեջ 19-րդ դարի առաջին կեսին և հայ առաջին համալսարանականները», համառոտակի ներկայացված է այն բոլոր դրական տեղաշարժը, որ տեղի ունեցավ Արևելյան Հայաստանի և Ռուսաստանի հայկական գաղթաբանների սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում երկրամասը Ռուսաստանին միացումից հետո: Նշված դրական տեղաշարժը հատկապես ակնառու էր ժողովրդական կրթության բնագավառում: Նշված ժամանակահատվածում մեկը մյուսի ետևից բացվում են ազգային և պետական մի շարք կրթական հաստատություններ՝ Աղարարյան դպրոց, Լազարյան ճեմարան, Ներսիսյան դպրոց, Խալիբյան ուսումնարան, Գևորգյան ճեմարան, Թիֆլիսի, Բաքվի, Քութայի, Երևանի գիմնազիաները, Շուշիի, Ալեքսանդրապոլի, Երևանի քեմական դպրոցները և այլն: Նշված կրթական հաստա-

տությունների շարքում հասկապես ընդգծված է Լազարյան ճեմարանի դերը, քանզի այն իր հոգաբարձության ու ուսուցչա-դասախոսական կազմի ջանքերով գոյության ողջ ընթացքում ոչ միայն պահպանեց ազգային դիմագիծը, այլև դավանական կայսրության առաջին կարգի դպրոցների՝ փոխների շարքը, իր շրջանավարտներին իրավունք էր ընձեռում ընդունվել կայսրության ցանկացած համալսարան: Այս առումով հասկապես կարևորվում է 1860 թ. փետրվարի 22-ի կայսերական հրամանագիրը, որով ճեմարանը լավ և գերազանց գնահատականներով ավարտած սաները իրավունք էին ստանում առանց քննությունների ընդունվել կայսրության ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատություն⁶: Տեղին է նշել, որ ճեմարանի դեկավարությունն իր հաշվին տարեկան հինգ շրջանավարտ էր գործադրում Մոսկվայի համալսարան՝ ավարտելուց հետո վեց տարի Լազարյան ճեմարանի կամ Կովկասյան ուսումնական օկրուգի նշանակմամբ աշխատելու պայմանով⁷:

Արևելահայ իրականության մեջ կրթական գործի զարգացման պատկերն ընդհանրացնելու նպատակով բերված են մի շարք վիճակագրական ավյալներ, ըստ որոնց արդեն դարի 70-ական թվականներին Ռուսական կայսրությունում գործում էր հայկական ազգային 266 դպրոց և ուսումնարան՝ 10721 աշակերտով⁸: Ժողովրդական կրթության ցուցանիշով՝ 66 հայ բնակչին մեկ ավոդոյ, հայերը կայսրությունում գրավում են առաջին տեղերից մեկը, քանի որ նույն շրջանում՝ 1873 թ., Եվրոպական Ռուսաստանում 87 բնակչին էր ընկնում մեկ ավոդոյ⁹:

Այսպիսով, հայ ազգաբնակչության մի մասի նյութական համեմատաբար բարձր վիճակը, պետական և ազգային կրթական հաստատությունների բավական լայն ցանցը, հարյուրավոր հայ երիտասարդների համար իրական հնարավորություններ ստեղծեցին շարունակել ուսումնառությունը ռուսաստանյան համալսարաններում: Որոշակի ժամանակահատվածում այդ գործընթացին նպաստեց նաև ցարական կառավարության քաղաքականությունը: Վերջինս նոր նվաճված տարածքների տնտեսական յուրացման համար կարիք ուներ գանձել նվիրված աշակերտական ծագումով բարգմանիչների, աստիճանավորների, բժիշկների, ուսանողների և այլն, որ դեռ 1803 թ. կայսերական հրամանով հայերից և վրացի աղքատացած ազնվականների որդիներից 12 երիտասարդ գործադրվեցին Մոսկվայի համալսարան՝ պետության հաշվին բժշկություն ուսանելու¹⁰: Ցարական կառավարության՝ այս բնագավառում հետապնդած նպատակներն ավելի բացահայտ արտահայտված են կայսեր 1844 թ. հունվարյան հրամանագրում, որտեղ նորոգվողներն նշված էր. «Թագավոր կայսրը ուշադրություն դարձնելով այն բանի վրա, որ Անդրկովկասում պա-

կասում են ընդունակ և վստահելի աստիճանավորները և ընդունելով, որ այդ պակասը կարելի է լրացնել միայն պետական ծագումով կովկասցի երիտասարդների ուսուցման ճանապարհով, մյուս միջոցառումների հետ հաճեց հրամայել՝ 1) պետության հաշվին տարեկան հինգ կովկասցի երիտասարդ դաստիարակել Մանկա-Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժնում, 2) համալսարանի ապագա ուսանողները պետք է ընտրվեն իշխանական և ազնվական հայտնի ու հարգված ընտանիքներից»¹¹: Շուտով կովկասյան ուսանողների թիվը կառավարության հրամանով հասցվեց 20-ի: Այդուհանդերձ պետք է նշել, որ 19-րդ դարի առաջին կեսին հայ ուսանողության թիվը ռուսական համալսարաններում մեծ չի եղել: Այսպես՝ 1826-1835 թվականներին Մոսկվայի համալսարանում ուսանել է ընդամենը 27 հայ երիտասարդ¹², Պետերբուրգի համալսարանը մինչև դարի կեսը ավարտել է միայն 12 հայ ուսանող¹³, իսկ Կազանի համալսարանում նրանց թիվը չի անցել մեկ տասնյակից¹⁴: Աշխատանքում ըստ արժանվույն գնահատված է հայ առաջին համալսարանականների խաղացած դերը հայ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի զարգացման գործում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.- «Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանների հայ ուսանողությունը 19-րդ դարի երկրորդ կեսին»: Այս գլխի առաջին մասի իմանական խմբից է հայ ուսանողության թվային, աղյուսակային և ռեզյումայ կազմի լուսարանում: 1857 թ. կառավարությունը ընդունեց համալսարանական նոր կանոնադրություն, որը հասարակության լայն խավերի համար ավելի մատչելի դարձրեց բարձրագույն կրթությունը: Այս հանգամանքը, գումարվելով արևելահայ իրականության մեջ կատարված դասկան տեղաշարժերին, հիմք հանդիսացավ հայ ուսանողության թվի շարունակական ավելացման և աղյուսակային կազմի դեմոկրատացման համար, ընդ որում, այդ գործընթացը դրսևորում էր անընդհատ ավելացման միտում. արդեն 1851-1861 թթ. ընթացքում հայ ուսանողության թիվը Մոսկվայի համալսարանում եռապատկվեց՝ 14-ից հասնելով 45-ի: Այդ նույն տասնամյակում Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 281 մարդ¹⁵: Այդ աճը հիմնականում տեղի էր ունեցել ի հաշվի ստեղծարար-արդյունաբերական և աստիճանավորական դասից սերած երիտասարդության: Ընդհանուր առմամբ հայ ուսանողության աղյուսակային կազմը համալսարանական միջինի համեմատությամբ շատ ավելի դեմոկրատական էր (ժողովրդային մոտ կանգնած խավերից ելած ուսանողությունը կազ-

⁶ РГИА, ф. 880, оп. 5, д. 259, лл. 1, 4, 5.

⁷ Նույն տեղում, գ. 255, ք. 127, 147:

⁸ «Փորձ» ամսագիր 1877, թիվ 4, էջ 155-157:

⁹ Նույն տեղում, 1877, թիվ 2, էջ 90-110:

¹⁰ Акты, собранные Кавказскою археографическою комисею. Т. 2, Тифлиси, 1869, стр. 252.

¹¹ ГАЛО, ф. 14, оп. 1, д. 4681, л. 2-3.

¹² Արշարունի Ա. Ա., Մոսկվայի համալսարանը և հայ առաջին մոսկովյանությունը, Եր., 1982, էջ 46:

¹³ Григорьев В. В. Императорский Санкт-Петербургский университет в течение первых пятидесяти лет его существования. СПб., 1870, стр. 425.

¹⁴ Преподаватели, учащиеся и служащие Императорского Казанского университета (1804-1904 гг.). Часть I, вып. I, 1805-1854 гг., Казань, 1904 г., стр. 25.

¹⁵ Отчеты о состоянии и действиях Императорского Московского университета за 1851-1861 гг. Именная ведомость об учащихся к 1-ому января тех же годов.

մում էր ընդհանուր քվի կեսից ավելին): Դա առաջին հերթին պիտի բացատրել հայ ժողովրդի դասակարգային կազմի յուրահատկությամբ՝ առհմական ազնվականության հատուկեմա քանակով:

Հայ ուսանողության քվական աճը Մոսկվայի համալսարանում հասկալես սկ-նառու էր 80-90-ական քվականներին: Արյեն 1884-1885 ու. տարում նրանց քիվը հասավ 66-ի¹⁶, 1894 թ. հայ ուսանողների քիվը բոլոր չորս ֆակուլտետներում կազմում էր 94, իսկ 1897-ին՝ 119 մարդ¹⁷: Շարունակվում էր նաև հայ ուսանողության առ-ցիակական կազմի ղեմնկրատացման պրոցեսը: Այս առումով առավել բնութագրա-կան է 1884-1885 ու. տարին, որի ընթացքում ապորող 66 հայ ուսանողներից 16-ը քաղքենիներ էին (24%) 14-ը՝ գյուղացիներ (21 %), 7-ը պոականում էին առևտրա-կան դասին (10 %), տասը ցածրատիճան հոգևորականների գավակներ էին (15 %), ազնվական ընտանիքից էր ընդամենը 10 ուսանող՝ քիվ միայն 15 %-ը¹⁸:

Ընդլայնվում է հայ ուսանողության ռեզիդուա ներկայացությունը: Եթե դարի 30-40-ական քք. նրանք հիմնականում ներկայացնում էին Ռուսաստանի հայկական գաղթօջախները, ապա ընդամենը մի քանի տասնամյակ անց նրանց հիմնական մասը Անդրկովկասից էր, ավելին՝ բուն Հայաստանից: 1884-1885 ու. տարվա 66 հայ ուսանողներից 11-ը Թիֆլիսից էին, 15-ը՝ Երևանի նահանգից, 9-ը՝ Եկատերինոպո-լից, ուսանողներ կային նաև Ալեքսանդրապոլից, Էջմիածնից և այլն: Պատկերն սմբողջացնելու համար նշենք, որ 1884-1895 քք. համալսարանն ավարտած 232 հայ երիտասարդներից 156-ը Անդրկովկասից էին, Թիֆլիսի նահանգ՝ 60, Երևանի նա-հանգ՝ 43, Գանձակի նահանգ՝ 37, Կարսի՝ 5, 11-ը՝ Բաքվից և Դերբենդից: Ամփոփե-րով նշենք, որ 1862-1894 քք. Մոսկվայի համալսարանի լրիվ դասընթացն ավարտել էին 440 հայ երիտասարդ:

Պատկերը գրեթե նույնն էր նաև Պետերբուրգի համալսարանում: Այսպես, եթե 1850-1869 քք. այն ավարտել է ընդամենը 30 հայ երիտասարդ¹⁹, ապա դարի վերջում հայ ուսանողության տարեկան միջին քիվն այստեղ անցնում է երեք տասնյակից, ո-րի շուրջ 80 %-ը սերում էր ոչ ազնվականական ընտանիքներից²⁰: Այստեղ ևս նկատ-վում է Անդրկովկասից և մասնավորապես, Արևելյան Հայաստանից եկած ուսանո-ղության քիվ աճ: 1870-1875 քք. Պետերբուրգի համալսարանի հայագի ուսանողնե-րի պահպանված 17 անձնական գործից երևում է, որ նրանցից 12-ը՝ Անդրկովկասից էին, 2-ը՝ Աստրախանից, 1-ը՝ Պետերբուրգից և 2-ը՝ Նոր Նախիջևանից²¹:

19-րդ դարի երկրորդ կեսի Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանների հայ ո-սանողության վիճակագրության և ուսումնառության ընթացքի ուսումնասիրությունը

¹⁶ ЦГИАМ, ф. 418, оп. 515, д. 15. Биографический список студентов Московского уни-верситета за 1884-85 гг.

¹⁷ Там же, дд. 21, 24.

¹⁸ Там же, д. 15. Биографический список студентов за 1884-1885 гг.

¹⁹ Григорьев В. В. Список студентов Имп. СПб. университета, СПб., 1870.

²⁰ ГАЛО, ф. 14, оп. 3, том 7, Личные дела студентов.

²¹ Там же, Личные дела студентов 1870-1875 годов.

մասնանշում է մի ընդհանուր երևույթ. այդ համալսարանների հայ ուսանողության նկատելի մեծամասնությունը գերադասել է բժշկական և իրավաբանական ֆակուլ-տետները, որոնցում ապորողների քիվը որոշ տարիների կազմել է հայ ուսանողու-թյան ընդհանուր քվի 70-80 %-ը: Այդ երևույթը կարծում ենք բացատրվում է հետևյալ մի քանի հանգամանքներով՝ 1. ազատ մասնագիտության տեր դիպրմավոր մասնա-գետի համար հետագու գործունեության առավել լայն հնարավորություններով. 2. այդ ֆակուլտետների համար հասկացված պետական բոշակների համեմատական մեծ չափով: Աչքի է զարնում պատմադեզվագրական և ֆիզիկոմաթեմատիկական ֆակուլտետներում հայ ուսանողության վաղըրաբությունը, որը, հավանաբար, բա-ցատրվում է Կովկասում արդյունաբերության զարգացման համեմատաբար ցածր մակարդակով և հայ ուսուցչի նյութական աննախանձելի վիճակով:

Մույն գլխում քննության առնված կարևոր հարցերից է նաև հայ ուսանողության նյութական միջոցների և նյութական վիճակի հիմնահարցը, քանզի անվիճելի է, որ նշված ժամանակահատվածում հայ ուսանողության քիվն անհամեմատ ավելի մեծ կարող էր լինել, եթե առկա չլիներ մի շարք դժվարություններ, որոնք պայմանակա-նորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ վարչական, կլիմայական և նյութական:

Խոսելով կառավարության հարուցած վարչական խաչընդունների մասին, որոնք անտարակույս բացասաբար են անդրադարձել հայ ուսանողության քվական աճի վրա, պիտի նշել, որ 19-րդ դարի 70-80-ական քվականներին ցարական կառավա-րության քաղաքականությունը բարձրագույն կրթության բնագավառում ազգային վաղըրամասնությունների, այդ քվում նաև հայերի նկատմամբ արդեն վաղուց դադա-րել էր «հավանավորչական» լինելուց: Ավելին, չլիմելով բացահայտ օրենսդրական արգելքների՝ կառավարությունը մի շարք վարչական միջոցառումների օգնությամբ վաղըրում է առհմանափակել կովկասցի երիտասարդների մուարը մույրաբարաբա-լիս համալսարաններ: Այսպես, Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններ ըն-դունվելիս առավելությունը արվում էր սույ ուսումնական օկրուգների գիմնազիսնե-րի շրջանավարտներին, դրանով իսկ սախալելով շատ հայ երիտասարդների միջնա-կարգ կրթության ավարտական բնություններ հանձնել մոսկովյան ուսումնական օկրուգի գիմնագիաններում կամ Լազարյան ճեմարանում²²: Շարունակելով այդ քա-ղաքականությունը՝ ժողովրդական լուսավորության մինիստրությունը 1889 թ. հրա-ման արձակեց, որով հասունության առեստատ ունեցողները պետք է դիմեին իրենց ուսումնական օկրուգի համալսարանը²³: Այնքանով, որքանով կովկասյան ուսում-նական օկրուգը չունեի իր համալսարանը, կովկասցի դիմողներին առաջարկվում էր դիմել Խարկովի, Կիևի, Նովոռոսիայի համալսարաններ: Չայած այս միջոցա-ռումները լուսավորության մինիստրությունը բացատրում էր ուսանողները բոլոր հա-

²² ЦГИАМ, ф. 418, оп. 515, д. 12. Биографический список студентов Московского уни-верситета 1878-1879 года.

²³ Лалаян А. А. Русско-армянские медицинские связи (XIX век - начало XX века). Докт. диссертация. Ер., 1965, с. 90.

մալարաններում հավասարաչափության ցանկությամբ, իրականում, ըստ մեզ, դրանք հանդիսանում էին 70-80-ական թթ. Ռուսաստանում հեղափոխական շարժումների դեմ ձեռնարկված միջոցառումների բաղկացուցիչ մասը, և իրենց սուր ծայրով ուղղված էին ապրքեր ազգերի պատկանող երիտասարդության սերա շրջման դեմ: Յարական կառավարությունը առնում և հասկանում էր, որ այդ շփումը հաճախ հանգեցնում է այն բանին, որ կայսրության հեռավոր ծայրամասերից մայրաքաղաքային համալսարաններ եկած երիտասարդները «վարակվում» են հեղափոխական գաղափարներով և օբյեկտիվորեն դառնում են ազգային փոքրամասնությունների շրջանում այդ գաղափարների կրողներն ու տարածողները:

Հայ ուսանողության թվական աճին որոշակիորեն խոչընդոտում էին նաև որոշ համալսարանական քաղաքների կլիմայական պայմանները: Այս առումով, բացասական իմաստով խնարհե, հատկապես աչքի էր ընկնում Պետերբուրգը: Ուսանողների անձնական գործերում պահպանվել են ծագումով հարավցի, մասնավորապես, հայ ուսանողների բազմաթիվ դիմումներ²⁴ առողջական վիճակի վատթարացման պատճառով իրենց այլ համալսարան տեղափոխելու խնայանքով:

Նշված պատճառներն, ինչ խոսք, որոշակիորեն բացասական են ազդել հայ ուսանողության թվական աճի վրա, սակայն ինչպես հայ, այնպես էլ այլ ազգերի պատկանող երիտասարդության ճնշող մեծամասնության համար համալսարանական կրթության ճանապարհին ամենամեծ խոչընդոտը նյութական անապահով վիճակն էր: Մայրաքաղաքային համալսարաններում ուսման առանց այդ էլ բարձր վարձի՝ 50 ռ., կարող ավելացումը (1884 թ.՝ 100 ռ.) հարյուրավոր պատանիների առջև դիպեց համալսարանների դռները, միաժամանակ խիստ դժվարացավ նաև արդեն ընդունված շատ ուսանողների հետագա ուսումնառությունը, ամեն տարի ուսանողության մի հոծ զանգված բռնում էր ուսումը: Ըստ պրոֆ. Վ. Վ. Գրիգորիի՝ Պետերբուրգի համալսարանն իր գոյության առաջին հիսնամյակում ավել է 2200 շրջանավարտ, այդ նույն ժամանակահատվածում ուսումնառությունը չավարտած հեռացել է մոտ 1000 ուսանող²⁵: Այդ երևույթը չի շրջանցել նաև հայ ուսանողությանը, որի 25, երբեմն էլ ավելի տոկոսը չէր կարողանում ավարտել համալսարանը նշված պատճառով²⁶: Հայ ուսանողների համարյա յուրաքանչյուրի անձնական գործում մենք գտնում ենք բազմաթիվ դիմումներ՝ ուսման վարձից ազատելու, կամ էլ նպաստ նշանակելու խնդրանքներով: Այսպիսով, նյութականը հանդիսացել է վճռական գործոն հայ ուսանողության թվի ավելացման հարցում:

Իրենց գոյությունը պահպանելու և ուսումնառությունը շարունակելու համար ծնողներից ստացվող նյութական օգնությունից բացի հայ ուսանողությունը օգտվում էր մի քանի նյութական աղբյուրներից, որոնք պայմանականորեն կարելի է բաժան

նել չորս խմբի՝ 1. պետական միջոցներ, որոնց մեջ մտնում էին ժողովրդական թուսվորության միջխառնության, ուսումնական օկրուգների և համալսարանների թոշակներն ու նպատները: 2. Մասնավոր միջոցներ՝ զանազան հոգևոր և աշխարհիկ հասարակական կազմակերպությունների և մասնավոր անձանց դրամական հատկացումներն ու թոշակները: 3. Ուսանողական կազմակերպությունների՝ հայրենակցական միությունների, դոկտորության դրամակրկներ և այլն, կազմակերպած զանազան միջոցառումներից ստացվող գումարներ: 4. Ուսանողների կողմնակի աշխատանքներից (մասնավոր դասեր, բարգմանություններ և այլն) ստացվող դրամական միջոցներ: Եթե 30-50-ական թթ. պետական թոշակներն ու նպատները վճռական դեր էին խաղում հայ ուսանողության նյութական ապահովման գործում, և նրանց մեծ մասը պետական թոշակառուներ էին (1851-1852 թթ. 18 հայ ուսանողից 11)²⁷, ապա արդեն 60-ական թթ. պետական թոշակառուների թիվը ուսանողության ընդհանուր թվի համեմատ խիստ նվազեց: Այսպես, 1865 թ. 31 հայ ուսանողից պետական թոշակառու էր ընդամենը 5-ը²⁸, 1878-79 ուս. տարում 33-ից 7-ը²⁹, 1885 թ. 66-ից՝ 9-ը³⁰: Այսպիսով, պետական թոշակներն ու նպատները հայ ուսանողության նյութական ապահովման առումով շատ շուտով դադարում են վճռական գործոն լինելուց և առաջին պլան են մղվում մասնավոր աղբյուրներից և ուսանողության կողմնակի աշխատանքներից ստացվող դրամական միջոցները, որոնք հաճախ բավական պատկառելի գումար էին կազմում և կրում էին մշտական բնույթ: Այսպես, օրինակ, 1883 թ. Լազարյան 5 թոշակներին ավելացավ կոմս Միքայել Տարիերովիչ Լառի-Մելիքովի թոշակը՝ տարեկան 360 ռ. չափով³¹: Ավելի պատկառելի էր դրինահայ մեծահարուստ Բերբերյանի ավանդը՝ Մոսկվայի համալսարանի դրինահայ 4 չքավոր ուսանողների տարեկան 440-ական թուրի թոշակ հատկացնելու մասին, նրանց միաժամանակ սրբաավորեցներով ավարտելուց հետո երկու տարի ծառայել տավրիկյան նահանգի դպրոցներից մեկում³²: Հայ չքավոր ուսանողների օգտին դրամական հատկացումներ է արել հայ վաստակաշատ արևելագետ Բ. Պատկանյանը³³: Հայ ուսանողներին իր վնասը, սակայն մշտական օժանդակությունն է ցույց տվել նաև Պետերբուրգի հայ եկեղեցին, որը միայն 1884 թ. 15 հայ կարիքավոր ուսանողների հատկացրեց 20-ական թուրի³⁴:

Ցավոք, առանց այդ էլ սակավաթիվ այդ թոշակները հաճախ բաժին էին ընկնում նյութապես ապահովված ուսանողների: Կովկասյան կոմիտեի և հայկական եկեղեցական

²⁷ Отчет о состоянии и действиях императорского Московского университета за 1851-1852 гг.

²⁸ Алфавитный список студентов Московского университета за 1865 г. М., 1865.

²⁹ ЦГИАМ, ф. 14, оп. 515, д. 12.

³⁰ Там же, д. 15.

³¹ ГАЛО, ф. 14, оп. 3, д. 10428, л. 28.

³² «Մարմ» 1895, հ. 5, էջ 73:

³³ Годичный акт Санкт-Петербургского университета 1886 г., с. 94.

³⁴ ГАЛО, ф. 510, оп. 1, д. 130, л. 1-9.

²⁴ ГАЛО, ф. 14, оп. 3, д. 17264, лл. 26, 31, 52, д. 18152, л. 7, д. 27346, л. 10.

²⁵ Григорьев В. В., *նշված աշխ.*, էջ 313:

²⁶ Արշալույսի Ա. Ա., *Մոսկվայի համալսարանը և հայ առաջավոր մտավորականությունը*, էջ 86:

խորհրդի կողմից այդ հարցում բոլոր տված կամայականությունները բազմիցս քննադատության առարկա են դարձել ժամանակի հայ մամուլում: Այս առումով ուշագրավ է, օրինակ, 1879 թ., «Մշակ»-ում Ղեկավարը հայտարարում է, «Ինչպես հայտնի է, գրում է քերթը, Մոսկվայի համալսարանում և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում կան կովկասյան թռչակառատներ, սակայն սովորաբար է հարուցում այն, որ այդ թռչակառատները հիմնականում հարուստների որդիներ են, որոնք սեռական թռչակը վատնում են ցածրասարգ զվարճությունների և քաղաքների վրա, մինչդեռ կան ոչ քիչ աղքատ ուսանողներ, որոնք ոչ միայն թռչակ չեն ստանում, այլև ընդհանրապես գորկ են գոյության միջոցներից»³⁵: Նույն քերթի կողմից քննադատվեց նաև հայ եկեղեցական խորհուրդը՝ թռչակները ոչ ճիշտ բաշխելու համար³⁶:

Հայ ուսանողության զգալի մեծամասնությունը զրկված լինելով որևէ օգնությունից, ինքն էր հոգում իր հանապազօրյա հացը՝ ստեղծելով մի շարք ուսանողական կազմակերպություններ (փոխօգնության դրամարկոներ, հայրենակցական միություններ), որոնք իրենց ձեռքն էին վերցրել կազմակերպվող երեկույթներից և քաղաքական ներկայացումներից ստացված հատույթների անօրինումը: Այդ կազմակերպությունների առաջնեկը դարձավ 1855 թ. Մոսկվայի համալսարանում ստեղծված «Ուսանողական ժողով» հայրենակցական միությունը: Իր գոյության շուրջ 60 տարում այն խիստ կարևոր դեր խաղաց կարիքավոր հայ ուսանողությանը նյութական օժանդակություն ցույց տալու գործում: Համալսարանի սան Կաչկաչյանը «Մշակ» - ին գրած իր նամակում «Ժողովը» համարում է հայ ուսանողների միակ հույսը³⁷: Կազմակերպության նյութական բազան քաղաքական ներկայացումներից, համերգներից, երեկույթներից գոյացած գումարներն էին և հայ հասարակայնության նվիրատվությունները, որոնք հաճախ պատկառելի գումար էին կազմում: Այսպես, 1872 թ. ընդամենը մեկ երեկույթից ստացված եկամուտը կազմեց 463³⁸, իսկ 1879 թ. Մոսկովյանի «Պեպո» դրամայի ներկայացումից ստացված հասույթը՝ 600 ռ.³⁹: Գարավերջին այդ ներկայացումներից ստացվող եկամուտը զգալիորեն աճեց, որը վկայում է առողի հայ համայնքի՝ դեպի ազգային մշակույթն ունեցած հետաքրքրությունն աճի, ուսանողների խաղամակարդակի բարձրացման մասին: 1895 թ. «Մուրճ» հանդեսի վկայությամբ, ուսանողական երեկույթից և ներկայացումից ստացված եկամուտը կազմեց 4200 ռ.⁴⁰, իսկ Պետերբուրգի հայ ուսանողության նմանատիպ միջոցառումը բերեց 1644 ռ. շահույթ⁴¹: Ուսանողության նյութական միջոցների հայթայթման մյուս աղբյուրը որոշ չափով ուսմանը գուգահեռ և արձակուրդների ժամանակ կատարվող գնահատական աշխատանքներն էին (մասնավոր դասեր, բնորոշ, գովազդային հայտա-

բարությունների տարածում և այլն):

Հայ կարիքավոր ուսանողներին բազմիցս եղբայրական օգնության ձեռք է մեկնել նաև ռուս առաջադեմ հասարակայնությունը: 1899 թ. «Մշակը» իր ընթերցողներին տեղեկացնում է, որ Կիևի դրամատիկական թատրոնի դերասան Բազալովը կազմակերպել է գրական-երաժշտական երեկույթ, որի հասույթը՝ 170 ռ., նվիրաբերել է հայ կարիքավոր ուսանողներին⁴²: Հայ ուսանողությանը նյութական օժանդակություն ցույց տալու գործում իրենց բուն ունեն նաև Վեսելովսկին, Բրյուսովը և այլք: Իր հերթին հայ ուսանողությունը շատ անգամ իր սող միջոցներից բաժին էր հանում կարիքավոր ռուս ուսանողներին: 1892 թ., ցուցաբերվող բարձր համանվիզմ և զիսակցություն, հայ ուսանողությունը օգնություն է ցույց տվել երաշխից առժամ սովորեցողներին⁴³:

ԵՐԲՐՈՐԴ ԳԼԽՈՒՄ «Հայագիտությունը և նրա դասավանդումը Պետերբուրգի համալսարանում», ուսումնասիրման հատուկ նյութ են դարձել հայագիտության դասավանդման հարցերը, ներկայացված են Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետի և հասկապես նրա հայոց լեզվի ու պատմության ամբիոնի գործունեությունը, նրա հիմնադիր անդամների և մյուս երախտավորների ներդրումն այս հարցում:

Արևելագիտության, մասնավորապես հայագիտության զարգացումը Ռուսաստանում պայմանավորված էր Մերձավոր Արևելքում և Կովկասում Ռուսաստանի վարած արտաքին քաղաքականությամբ: Նոր միացված տարածքների անտեսական և քաղաքական յուրացումը պահանջում էր առկա կառավարողների լեզուների և բարբերի իմացություն, առկա կան ծագումով գահին նվիրված առաջնականությունների պատրաստում: Այդ հրամայականի արտահայտությունը դարձավ 1804 թ. համալսարանական կանոնադրության այն կետը, որը պահանջում էր «արևելյան լեզուների դասավանդման դասընթաց մտցնել բոլոր համալսարաններում»՝ գիտության պահանջներին համապատասխան⁴⁴: Դա Ռուսաստանում արևելագիտության բարձրագույն դպրոցի հիմնադրման ուղղությամբ կատարված ժամանակագրական առաջին և առաջին կառավարական կարգադրությունն էր, որը սակայն մասնագետների, համապատասխան լեզուներով ձեռնարկների ու դասագրքերի բացակայության պատճառով հաջողվեց մասամբ իրականացնել միայն 7 տարի անց՝ 1811 թ., երբ Մոսկվայի համալսարանում ուսումնասիրվող լեզուներին սովորեցվեցին արաբերենը, պարսկերենը և եբրայերենը⁴⁵: Փոքր-ինչ ուշ՝ 1818 թ., Պետերբուրգի համալսարանի պրոֆեսորներ Ժ. Դ. Դեմանովը և Ֆ. Բ. Շարմաևան ձեռնամուխ են լինում արաբերենի, հայերենի, պարսկերենի և բուրբերենի ուսուցմանը⁴⁶: Այդ մասին Պետեր-

³⁵ «Մշակ» Նամակ Մոսկվայից, 1879, հ. 40:

³⁶ Նույն տեղում, 1895, հ. 117:

³⁷ «Մշակ» Փոխադարձ օգնության 40-ամյակը, 1895, հ. 88:

³⁸ Նույն տեղում, 1872, հ. 11:

³⁹ Նույն տեղում, 1879, հ. 9:

⁴⁰ «Մուրճ», Մոսկվայի հայկական երեկույթը, 1895, հ. 2, էջ 348:

⁴¹ Նույն տեղում, 1897, հ. 2-3, էջ 403:

⁴² «Մշակ», 1899, հ. 202:

⁴³ Նույն տեղում, 1892, հ. 26:

⁴⁴ Веселовский Н. И. Сведения об официальном преподавании восточных языков в России. СПб., 1880, с. 110.

⁴⁵ История Московского университета. Т. I, М., 1955, с. 181.

⁴⁶ РГИА, ф. 733, оп. 20, д. 235, л. 2.

բորգի ուսումնական օկրուգի հոգաբարձու Ռովարովի հաղորդումը առաջին և միակ տեղեկությունն է դեռ 1818 թ. Պետերբուրգում հայերենի դասավանդման մասին: Յավոք, չի նշված, թե ինչ բնույթ են կրել դասերը և ովքեր են եղել ունկնդիրները:

Ռուսական համալսարաններում հայոց լեզվի ուսումնասիրման հաջորդ վտորձը կատարվել է Դոբրպոտի համալսարանում՝ 1836 թ., սակայն այդ համալսարանի շրջանավարտ Խ. Աբովյանը, որին առաջարկվեց հայոց լեզվի դասավանդումը նորարաց ամբիոնում, հրաժարվեց այդ պաշտոնից⁴⁷: 1839 թ. մայրսին պաշտոնապես բացվեց Կազանի համալսարանի հայոց լեզվի ամբիոնը՝ մեկ օրդինար պրոֆեսորի հասանքով⁴⁸: Սակայն այսպեղ ևս մասնագետների և դասագրքերի բացակայությունը խանգարեց ամբիոնի իրական կայացմանը: Պատահական չէ, որ առաջին դասախոսությունները կարդացվեցին ամբիոնի պաշտոնական բացումից սովելի բան 3 տարի անց՝ 1842 թ., երբ այն գլխավորեց Սա. Նազարյանը: Չնայած այդպիսի բարձրորակ մասնագետի առկայությանը (Ս. Ե. Նազարյանը մինչև 1864 թ. հսկողի սանում էր Ռուսաստանում արևելյան բանահյուսության միակ հայ դոկտորը)⁴⁹ հայագիտությունը Կազանի համալսարանում այդպես էլ չհաջողվեց պատշաճ մակարդակի հասցնել: Չկային դասագրքեր և ծրագրեր, տարիներ շարունակ չէր հաջողվում համալսարանն ապահովել հայերեն ուսումնասիրել ցանկացող ուսանողներով:

19-րդ դարի 40-ական թվականներին արևելյան լեզուների դասավանդումը կենտրոնացվեց Պետերբուրգի համալսարանում, որին արվեցին նաև կովկասյան և անդրկովկասյան թաղակները: 1844 թ. հուլիսի 24-ին հրապարակվեց հրամանագիր՝ «Սանկտ Պետերբուրգի համալսարանի Արևելյան բանահյուսության բաժնում վրացերեն, հայերեն և թաթարերեն լեզուների դասավանդում մտցնելու մասին»⁵⁰: Դասավանդվելիք առարկաները ունկնդիրներով ապահովելու նպատակով 1845 թ. հունվարի 11-ին ընդունվեց որոշում՝ «Ամեն տարի ծնունդով կովկասցի 5 երիտասարդների Պետերբուրգի համալսարանի արևելյան բանահյուսության բաժնում գործողներու մասին»⁵¹: Այս թվականից սկսած՝ արևելագիտության, մասնավորապես, հայագիտության զարգացումը Ռուսաստանում երկար տարիներ կապվեց Պետերբուրգի համալսարանի հետ: Հայոց լեզվի և պատմության ամբիոնի (1845 թ.) ինչպես նաև արևելյան լեզուների ֆակուլտետի (1855 թ.) հիմնադրմամբ հայագիտության դասավանդումը համալսարանում դրվեց սովելի ամուր հիմքերի վրա: Այս հարցում մեծ երախտիք ունեց հատկապես նորարաց ամբիոնի հիմնադիր սնդում և վարիչ Նիկիտա Լազարի Բերդյանը (Բերեա): Քաջ գիտակցելով, որ դասավանդման որակը պայմանավորված է առարկային հատկացված ժամերի քանակով և ուսումնական ձեռնարկների ու բառարանների առկայությամբ, նա իր համալսարանական

գործունեության առաջին իսկ օրից ամենայն եռանդով ձեռնամուխ եղավ այդ խրդիլների իրագործմանը: Նրա ջանքերով ավելացվեցին հայոց լեզվին ու պատմությանը հատկացված ժամերը⁵², ձեռք բերվեց բավական հարուստ մասնագիտական գրականություն: Ավելին, ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի պակասը լրացնելու համար նա հեղինակեց և 1850 թ. հրատարակեց «Հայկական լեզվի տարրական հիմքերը»՝ բերականության դասագիրքը, որը երկար տարիներ հանդիսանում էր հայոց լեզվի բերականության միակ դասագիրքը համալսարանում: Աշխատությունն արժանացավ նաև Պետերբուրգի գիտական հասարակայնության բարձր գնահատականին, ներկայացվեց գիտությունների ակադեմիայի մրցանակաբաշխությանը և ստացավ 2-րդ դեմիտովյան մրցանակ⁵³:

1857 թ. անխնայ գիտական-մանկավարժ ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը ներկայացրեց իր «Ռուս-հայ-ֆրանսերեն» եռախառն բառարանի առաջին հատորը, որը ևս արժանացավ բարձր գնահատականի: Առաջացած տարիքի պատճառով 1859 թ. նա թողեց գիտամանկավարժական աշխատանքը: 1861 թ. հայոց լեզվի և պատմության ամբիոնի ղեկավարումը ստանձնեց հայագիտության մեկ այլ երախտավոր՝ աստղանդավոր գիտական և մանկավարժ, արևելագետ և լեզվաբան Զեյնովը Պետրոսի Պատկանյանը, որը հաջորդ երեք տարիների ընթացքում պաշտարաններով մագիստրական՝ «Սասանյան արքայատան պատմության վտորձ ըստ հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների» (1863 թ.) և դոկտորական՝ «Հետազոտություն հայոց լեզվի կազմության մասին» (1864 թ.) ստեղծագործությունները, արժանացավ էքստրաօրդինար, ապա օրդինար պրոֆեսորի կոչման: Կարճ ժամանակամիջոցում նա դարձավ Ռուսաստանում արևելագիտության բնագավառում խաղաղության հեղինակություններից մեկը՝ մի շարք միջազգային գիտաժողովներում ներկայացնելով արևելագիտության ռուսական դպրոցը:

Իր գիտամանկավարժական շուրջ 30-ամյա բեղմնավոր գործունեության շնորհիվ Պատկանյանը հայոց լեզվի և պատմության դասավանդումը համալսարանում բարձրացրեց նոր մակարդակի, դրանով իսկ հնարավոր դարձնելով արևելագիտության այնպիսի երախտավորի ձև ավոդումը, ինչպիսին էր նրա աշակերտ և գործի սնմիջական շարունակող Նիկոլայ Յակովլև իչ Մառը, որի օրոք արևելագիտության ռուսական դպրոցը հասավ իր գագաթնակետին: Հայոց լեզվի և պատմության դասավանդման մակարդակի բարձրացման գործում որոշակի դրակն ներդրում ունի նաև թաթարական (աղբբեջաներեն) լեզվի ամբիոնի վարիչ, էքստրաօրդինար պրոֆեսոր Դազար Ջաբարի Բադալյանը, որը ղեկավարել ու գրախոսել է շատ հայ ուսանողների և ասպիրանտների գիտական աշխատանքներ: Նշված անձանց և այլոց ջանքերով Պետերբուրգի համալսարանը դարձավ Ռուսաստանում հայագիտության զարգացման կարևոր օջախ, ուր իրենց գիտական մկրտությունը ստացան աասնյակ հայագետներ:

⁴⁷ Մրով Գ. Ա., *Խաչատուր Աբովյան, եր., 1948, էջ 117*:

⁴⁸ Бартольд В. В. Материалы для истории факультета восточных языков. Обзор деятельности факультета 1855-1905 гг. Т. I, СПб., 1909 г., с. 65.

⁴⁹ Там же, т. I, с. 423.

⁵⁰ Полное собрание законов. Т. XIX, отд. I, N 18095.

⁵¹ Там же, N 18613.

⁵² ГАЛС, ф. 14, оп. 1, д. 4728, л. 10.

⁵³ Арешян С. Г. Армянская печать и царская цензура, с. 118.

Հայոց լեզվի ու պատմության ամբիոնի գործունեության համակողմանի լուսաբանման նպատակով տաեմախոսության մեջ հետազոտվել են հայագիյի ուսանողների ուսուցման պրոցեսին, ուսումնական պլաններին ու ծրագրերին առնչվող հարցերը: Դրա համար, բնականաբար, ընտրել ենք ժամանակի այն ուսանողներին, որոնք (Կ. Եզյան, Գ. Մուրադյան, Ռ. Պատկանյան) ուսումնառության պրոցեսին վերաբերող գործերը, որոնք հետագայում նկատելի դեր են խաղացել հայ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում: Առարկայական պլանների ու ծրագրերի, քննական հարցառումների բնույթի հետազոտումն անգամ բերում է այն համոզման, որ արևելագիտության և, մասնավորապես, հայագիտության դասավանդումը դրված է եղել ժամանակի համար խիստ բարձր մակարդակի վրա: Դրա ապացույցն են, օրինակ, համալսարանի այդ շրջանի սան, ապագայում նշանավոր պատմաբան-հայագետ Կարապետ Եզյանի (Էզով) մագիստրական քննությունների հարցերը. ռուսաց պատմությունից՝ 1) հարաբերությունները մոսկովյան ցարերի և Ղազանի խանության միջև: 2) Վանքապատկան կալվածքները և նրանց օտարումը հոգևոր գերատեսչությունից պետական իշխանության ուժեղացմանը գուցեհետ: Ընդհանուր պատմությունից՝ 1) Արևելքի և Արևմտքի մերձեցումը հույն-հռոմեական դարաշրջանում և այն իրադարձությունները, որոնք նպաստել են այդ մերձեցմանը: 2) Անգլիայի և Ֆրանսիայի մրցակցության պատմական ակունքները և մրցակցության հետագա խորացումը միջին դարերում: Հայոց լեզվից և գրականությունից՝ 1) Ինչու է Մ. Խորենացին իր «Հայոց պատմություն»- մեջ հունական աղբյուրները գերադասել քաղդեականից: 2) 5-րդ դարի հայ գրականության ազդեցությունը 12-րդ դարի գրականության զարգացման վրա: Հայոց պատմությունից՝ 1) Պարսիք Սկադրյանի՝ որպես հայոց առաջին բազմաթիվ արքայի, և Հայաստանի աշխարհագրական դիրքը նրա օրոք: 2) Հայկը՝ որպես հայերի նախահայր⁵⁴: Նա քննություններ է հանձնել նաև ռուսերենից, անգլերենից, պարսից գրականությունից և պատմությունից: Բացի վերը նշվածից, Էզովը, պահանջվող կարգի համաձայն, ֆակուլտետի խորհրդին է ներկայացրել նաև երկու գրավոր աշխատանք՝ «Հայ-պարսկական հարաբերությունները Տիգրան առաջինի օրոք» և «Հայ գրերի գյուղը», որոնք գրախոսվել են Բերոսի կողմից և արժանացել հույժ դրական գնահատականի⁵⁵:

Այսպիսով, ֆակուլտետը և նրա հայագիտական ամբիոնը ուսանողներին տալիս էր մասնագիտական և լեզվական խոր գիտելիքներ, որի արդյունքում ստանձնաբար ավերանում է հայ ուսանողների և շրջանավարտների գիտական աշխատանքների քիվը: Քննարկվող ժամանակաշրջանում մագիստրական առեմախոսություններ են պաշտպանում Կ. Եզյանը, Լ. Լազարի, Հ. Խիրջի, Լ. Մսերյանը, Գր. Խալաթյանը, իր առաջին գիտական լուրջ քայլերն է կատարում Սա. Մալխասյանը:

⁵⁴ ГАПО, ф. 14, оп. 3, д. 15357, лл. 1, 3, 6.

⁵⁵ ГАПО, ф. 14, оп. 3, д. 15357, л. 6.

Ճիշտ է Մսերյանը և Խալաթյանը եղել են Մոսկվայի համալսարանի սաներ, սակայն արևելագիտության և հայագիտության բնագավառում իրենց առաջին լուրջ գիտական քայլերը կատարել են Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում: Բարձր գնահատելով Պետերբուրգի համալսարանի խաղացած դերը հայ մտավորականության պատրաստման գործում և հայ մշակութային կյանքում՝ համալսարանի 50-ամյա հոբելյանի առթիվ մի խումբ հայ մաթեմատիկոսներ Երևանից հեռագրում են. «Պետերբուրգի համալսարանի մաթեմատիկոսները Զեգ հետ առնում են վառավոր հոբելյանը և հիշում են իրենց» Агма Матер»- ին⁵⁶:

ԶՈՐՐՈՐԳ ԳԼԽՈՒՄ, որը վերնագրված է «Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանների հայ ուսանողության հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը», ներկայացված է հայ ուսանողության մասնակցությունը համալսարանների հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին, հարկավ հիմնական շեշտը դնելով նրանց ազգային գործունեության վրա:

19-րդ դարը և հատկապես նրա երկրորդ կեսը Ռուսաստանի պատմության մեջ իրավամբ արժենշվում է որպես գիտության, մշակույթի և հասարակական-քաղաքական մարքի աննախադեպ զարգացման ժամանակաշրջան: Ավատատիրական կարգերի ճգնաժամի պայմաններում հասարակությունը, կանգնած լինելով Ռուսաստանի հետագա զարգացման ուղիների ընտրության երկրորդ փուլի առջև, արդեն դարձել է 30-40-ական թթ. բաժանվեց երկու խոշոր հոսանքի՝ սլավոֆիլների և արևմտականների: Հանդես եկան նաև դրանց ծայրահեղ դրսևորումները՝ մեծապետական ազգայնամոլությունից, մինչև հասարակության վերափոխման միայն հեղափոխական ուղի ընդունումը: Հասարակական-քաղաքական հայացքները, ինչպես նաև ռուսական և եվրոպական քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձությունները՝ ղեկարկատական շարժումը, 1848 թ. եվրոպական հեղափոխությունները, սոցիալիզմ-ազատագրական պայքարը Իտալիայում, լեհական ապստամբությունները, լայն արձագանք գտան ռուսական հասարակության և հատկապես, ուսանող երիտասարդության շրջանում: Արդեն 20-ական թթ. վերջերից ռուսական համալսարաններում մեկը մյուսի ետևից ստեղծվում են խմբակներ, որոնք, բացի մշակութային հարցերից, բարձրացնում էին նաև հասարակական-քաղաքական խնդիրներ: Գերցենի բնորոշմամբ համալսարանները դարձել էին «վստահավոր ազատախոսության գլխավոր շանձարաններ»⁵⁷: Ընդգծենք, որ հիմնականում համալսարաններում էր կենտրոնացած նաև ռուսական առաջավոր գիտությունն ու մշակույթը, հասարակական-քաղաքական միաբեր:

Առեմախոսության մեջ ցույց է արված, որ տարիներ շարունակ ապրելով և ուսանելով այդպիսի մթնոլորտում, հայ ուսանողությունը չէր կարող գերծ մնալ նրա ազ-

⁵⁶ Юбилейный акт Императорского Санкт-Петербургского университета. СПб., 1869, с. 139.

⁵⁷ "Колокол", 1861, N 112, с. 933.

դեցությունից և իր մասնակցությունը չբերել համալսարանական քաղաքական և մշակութային կյանքին: Այս աղերսով առեմախտության մեջ բերված են համալսարանական և ոստիկանական արխիվներում պահպանված նյութերը ուսանողական հոգումներին մասնակցած, համալսարաններից հեռացված և անգամ բանտարկված բազմաթիվ հայ ուսանողների վերաբերյալ: Այսպես՝ 1861 թ. ուսանողական մասնակցության անկարգություններին մասնակցելու համար Պետերբուրգի համալսարանից հեռացված 300 ուսանողների քվում են Նիկոլայ և Իվան Օհանյան եղբայրները, որոնք նեավեցին Պետրոպոլիսյան բանա, Ալեքսեյ Շահվերդյանը, Տիգրան Չոլախյանը, Նապոլեոն Ամատունին, Ավետիք Թամամշյանը⁵⁸: Մուսկովայի համալսարանից նույն պատճառով հեռացվեցին Գրիգոր Տեր-Մկրտչյանը, Նիկոլայ Միսնասարովը և այլք⁵⁹: Ընդգծելով հայ ուսանողության մասնակցությունը ուսանողական շարժումներին՝ միաժամանակ ցույց է ածված, որ հայ երիտասարդությանն ավելի շատ հոգում էին ազգային, մշակութային և ազգային-ազատագրական խրնդիրները: Ժամանակի առաջավոր հայ մտավորականությունը, ի դեմս ուսանողության մի մասի, դառնում է ազգային ինքնաճանաչման և ազգային-ազատագրական գաղափարների կրողը: Հայ համալսարանականներն արդեն դարձնում են ազգային կազմ ունեցող ուսանողական խմբակներ, հայրենակցական միություններ, փոխօգնության դրամարկղեր և այլն:

Ժամանակագրական առումով այդպիսի առաջին կազմակերպություններից էր Պետերբուրգի համալսարանի հայ ուսանողների հայրենակցական ընկերությունը, որի գործունեությունը արխիվային նյութերի և աղբյուրների սակավության պատճառով առանձին հետազոտության քենա չի դարձել: Ընկերությունն աճեցան հավանականությամբ վերջնականորեն ձևավորվել է 1861 թ. և իր վրա կրել է Մ. Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը: Յավոք, քիչ բան է հայտնի հայրենակցական միության անդամների և նրանց գործունեության մասին, սակայն պահպանված փոքրաթիվ փաստերն ու վկայությունները բույլ են տալիս կարծելու, որ հայրենակցական միության գործունեության հիմնական նպատակը եղել է միության անդամների միջոցով հեղափոխական գրականության տարածումը Անդրկովկասում՝ դրա համար օգտագործելով հայ, ինչպես նաև վրացի ուսանողների աճեցան առձուկությունը այցելություններն Անդրկովկաս: Այդ միտքը հաստատվում է Մ. Նալբանդյանի ընդունյալ գործունեությամբ, որտեղ քննության է առնվել ընդունյալ կենսաբանի, Ռուսաստանի հարավի և Անդրկովկասի միջև ուղղակի կապ հաստատելու հնարավորությունը: Յարական ոստիկանության 3-րդ բաժանմունքի 1865 թ. նոյեմբերի 1-ի տեղեկանքում ուղղակիորեն նշված է. «Մ. Նալբանդովը Լոնդոնում եղած ժամանակ ծանոթացել է Գերցենի, Օգարնի և Բակունինի հետ: Նրա մոտ հայանարբերվել են «Երկրագործությունը որպես ուղի ճանապարհ» գրքի 10 օրինակ և Բակունինի

երկու մամակները՝ 1862 թ. մայիսի 6- և 10-ի քվադրմամբ, որոնցում Բակունինը խնդրում է հնարավորություններ առեղծել ընդունյալ հրատարակությունները Կովկասում տարածելու համար»⁶⁰: Փաստաթուղթը վկայում է, որ ընդունյալ կենսաբանը Նալբանդյանի միջոցով ցանկացել է ընդհատակյա կայուն կապ հաստատել Լոնդոնի, Պետերբուրգի և Անդրկովկասի միջև՝ այնտեղ հեղափոխական գրականություն տարածելու նպատակով: Այդ խնդիրն իրականացնելու համար անհրաժեշտ էին հավատարիմ մարդիկ և միջոցներ, որոնք կարող էր տրամադրել միայն հայրենակցական ընկերությունը: Այնուհանդերձ, որ այս վարկածը, որն առաջ է քաշվել Ս. Արեշյանի, ինչպես նաև Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Ի. Լեյբերովի կողմից, վերջնականապես աշխատություններում կարիք ունի փաստաթղթային ավելի պատշաճ հիմնավորման, սակայն, ցույցով, ինչպես մեր, այնպես էլ ռուսալեզու հետազոտողների արխիվային որոնումներն այս ուղղությամբ դրական արդյունքների չեն հանգեցրել:

Այս նույն շրջանում՝ 50-ական թթ վերջերին և 60-ական թթ. սկզբին, Պետերբուրգի համալսարանի հայ ուսանողների մասնակցությամբ գործում էր ևս մեկ կազմակերպություն: «Երիտասարդ Իտալիա» կազմակերպության օրինակով այն կրում էր «Երիտասարդ Հայաստան» անունը՝ առավելապես հետամտալ լինելով ազգային խնդիրների: Նրա ակտիվ անդամներից էին Մովսես Բուրադյանը, Հովսեփ Իզմիրյանը, Մկրտիչ Մանասարյանը, Կարապետ Եզյանը, Սարգիս Ղախաճյանը, Ռուֆայել Պատկանյանը: Չնայած խմբակն ի դեմս Մ. Բուրադյանի և Ռ. Պատկանյանի ուներ նաև քաղաքական ձախ հայացքներ դավանող անդամներ, սակայն ընդհանուր առմամբ մեծամասնություն էին կազմում չափավոր, լուսավորչական հայացքների կողմնակիցները, որը պայմանավորում էր կազմակերպության ազգային լուսավորչական ուղղվածությունը: Դա չխանգարեց այդ շրջանում կառավարության ձայնախորհրդի մեկը հանդիսացող «Московские ведомости» քերթի խմբագիր Կատկովին իր մի շարք հոդվածներում կազմակերպության անդամներին մեղադրելու սեպարատիզմի և հայկական թագավորությունը վերականգնելու մտադրության մեջ⁶¹: Հոդվածագիրը հայերի ինքնությունության ձգտման ապացույց էր համարում անգամ իրենց ազգանվան վերջավորությունը «յանցի» վերածելու ցանկությունը: Ի պատասխան «Санкт-Петербургские ведомости» քերթում հանդես եկավ Կ. Եզյանը: Նա, ինչպես իրավացիորեն նշում է Ա. Հովհաննիսյանը, չժխտելով «Երիտասարդ Հայաստանի» գոյությունը, նրան վերագրում էր միայն լուսավորչական նպատակներ, միաժամանակ ընդգծելով, որ հայ ժողովուրդը ազգային քաղաքական պահանջներ չունի Ռուսաստանում⁶²: Դրանով իսկ Եզյանը փորձում է սառնանել շահաբաղձի դեր՝ վանելով հայ և ռուս սկսաբարդակայինների հարվածը ազգի մեծա-

⁵⁸ Лейберов И. П. Возникновение Кавказского землячества в Петербургском университете в период первой революционной ситуации. Л., 1979, с.100: см. так же ГАРФ, ф. 109, оп. I, I экзп. 1862 г., д. 230, ч. 76, с. 84-88.

⁶¹ «Московские ведомости», 1865, N 221-222

⁶² «Санкт-Петербургские ведомости», 1865, N 194, 259, 278.

⁵⁸ ГАРФ, ф. 14, оп. 25, д. 17, л. 12.

⁵⁹ ГАРФ, ф. 14, оп. 25, д. 17, л. 13.

մասնության գլխից՝ այն ուղղելով «խելակալության» փոքրամասնության՝ Մ. Նալբանդյանի, Մ. Բուդաղյանի և Ռ. Պատկանյանի դեմ⁶³։ 60-ական թթ. երկրորդ կեսին «Երիտասարդ Հայաստանը» դադարեցրեց իր աշխատանքները՝ այդպես էլ չվերածվելով ազգային-քաղաքական գործունեության։ Վերը նշված խմբակների գործունեության ուղղվածությունը ցույց է տալիս, որ դեռ 19-րդ դարի 50-ական թթ. վերջերից հայ ուսանող երիտասարդության շրջանում բավական տարածված են եղել ազգային ազատագրական և լուսավորչական գաղափարները, որոնց իրականացման ճանապարհը սակայն միանշանակ չի դիտվել սուրբեր հոսանքների կողմից։

70-80-ական թթ. հեղափոխական դեմոկրատական շարժումը Ռուսաստանում հիմնականում ընթանում էր նարդոնիկական գաղափարախոսության ազդեցության տակ, որը հատկապես լայն տարածում գտավ ուսանող երիտասարդության, այդ թվում նաև հայ ուսանողության մի մասի շրջանում։ Դրա արգասիքը դարձավ Մոսկվայի համալսարանի և այլ բուհերի հայ ուսանողների կողմից 1882 թ. անդեգրված քաղաքական կազմակերպության՝ «Հայրենասերների միության» և նրա ապագիյ օրգանի՝ «Ազատության ավետաբերի» ստեղծումը։ «Միության» հիմնադիր անդամներն էին Մոսկվայի համալսարանի ուսանողներ Միքայել Չալանը, Մարգար Արտեմյանը, Կարապետ Տեր-Խաչատրյանը, Սրապիոն Տեր-Գրիգորյանը և այլք։ Կազմակերպությունը ինչպես գաղափարական, այնպես էլ մարտավարական հարցերում դավանելով նարդոնիկական հայացքներ, միաժամանակ իր հիմնական խընդիրը համարում էր հայ ժողովրդի և հատկապես Արևմտյան Հայաստանի սոցիալական և քաղաքական ազատագրությունը, որի իրականացման հիմնական ուժը համարում էր համաժողովրդական զինված սրայթուրը⁶⁴։ Հառկանշանակ է, որ այդ ուղղությամբ «Միությունը» ձեռնարկել է անգամ գործնական քայլեր՝ սերտ կապեր հաստատելով Անդրկովկասում և Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Վանում և Կարինում գործող ազատագրական խմբակների հետ⁶⁵։ «Հայրենասերների միությունը» նրա անդամների մի մասի ուսումնառությունն ավարտելու, նյութական դժվարությունների և Ռուսաստանում ծայր առած քաղաքական հարստանքների հետևանքով 1886 թ. ինքնարժույթով։

Դարի վերջին հայ ուսանողությունը մասնակցությունը հասարակական քաղաքական պայքարին հիմնականում ընթանում է ծայր ստանդարտ համառոտական շարժման շրջանակներում։ Նրանցից շատերն ակտիվ մասնակցություն են ունենում դասադուլներին, ցույցերին, ակտիվորեն ներգրավվում են ինքնակալության դեմ մղվող պայքարին։ Ռուսաստանյան դաշնության պետական արխիվի ռախիկանական դեպարտամենտի հատուկ բաժնի փաստաթղթերում հանդիպում ենք ասանյակ և

ասանյակ հայ ուսանողների անունների, որոնք հեռացվել են կամ էլ ձեռքակալվել ուսանողական շարժումներին մասնակցելու համար։ Դրանցից են Արշակ Ղազարյանը, Փիլիպոս Բաբելովը, Գրիգոր Բարսաթյանը, Գրիգոր Գավթյանը, Գևորգ Իսահակյանը, Ռուբեն Մանուկյանը, Համագասպ Մինասյանը՝ Մոսկվայի համալսարանից, Յուրի Թամաճյանը, Մարկոս Տեր-Մկրտչյանը՝ Պետերբուրգի համալսարանից և այլք⁶⁶։ Նրանցից ոմանք եղել են ուսանողական շարժման ղեկավարների շարքերում, օրինակ՝ Մոսկվայի համալսարանի ուսանողների համագումարի գործադիր կոմիտեի ձեռքակալված անդամների թվում էին Հարություն Մարտիրոսյանը և Հովսեփ Ավարովը⁶⁷։

Հայ ուսանողության հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի կարևոր բնագավառներից էր գրական-հրատարակչական գործունեությունը։ Այս բնագավառում հատկապես լայն գործունեություն ծավալեց Մոսկվայի, ապա Պետերբուրգի համալսարանի ուսանող Ռաֆայել Պատկանյանը։ Հանդիսանալով Գումա-Զաքիայայի ամենագործունե անդամը՝ նա ամենատեղիով մասնակցություն ունեցավ ընկերության գրական հրատարակչական աշխատանքներին, ապա 1856 թ. տեղափոխվելով Պետերբուրգի համալսարան, ամսիջապես ձեռնամուխ եղավ մի քանի թարգմանչական և ինքնուրույն աշխատանքների (Նապոլեոն Բոնապարտ, Թովմաս Բոցարիս) շարադրմանը, որոնց քեմատիկան ուժեղ անհատի, իր հայրենիքն ազատագրող գործի փառաբանումն էր։ 1863 թ. նա իրականացրեց Պետերբուրգում առաջին հայերեն «Հյուսիս» պարբերականի հրատարակումը։

Պարբերականի խնդիրների ու առաջադիմական նպատակների մասին է վկայում գրաքննչական կոմիտեին ներկայացված ծրագիրը⁶⁸։ Նրա գործը շարունակեց Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի մեկ այլ սան՝ Սիմեոն Գյուլամիրյանը, որի ջանքերով և խմբագրությամբ շուրջ 12 տարի Պետերբուրգում հրատարակվեց «Արաքս» գրական-գեղարվեստական նկարագրող հանդեսը։

Պետերբուրգի համալսարանի ուսանողությունը ձեռնամուխ եղավ նաև մասսայական ընթերցանության համար նախատեսված սրահների հրատարակմանը, որի համար ստեղծվեց «Սանկտ-Պետերբուրգի հայ ուսանողների հրատարակչություն» (ՄՊՈՒՀ) ընկերությունը։ Ընկերության ջանքերով 70-80-ական թթ. հայ ընթերցողի սեղանին դրվեց թարգմանական պատմվածքների 5 ժողովածու, 3000-ական օրինակով⁶⁹։ Պատմվածքներն առանց բացառության վերաբերվում էին ազգային ազատագրության հիմնախնդրին և բացահայտում էին թուրքական բարենորոգումների իրական էությունը։ Նման ընկերություն գործում էր նաև Մոսկվայի համալսարանում։

⁶⁶ ГАРФ ф. 102, оп. 226, д. 3, ч. 1, БТ 2, лл. 8, 11, 12, 14, 41 (Списки студентов, уволенных за беспорядки).

⁶⁷ Там же, л. 32.

⁶⁸ РГИА, ф. 777, оп. 2, д. 90, л. 1 и об.

⁶⁹ РГИА, ф. 777, оп. 4, д. 45, л. 18.

⁶³ Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը։ Եր., 1956, հ. 2, էջ 15-16։

⁶⁴ Ղեռնդյան Հ., Հեղափոխական նարդոնիկական շարժումը հայ իրականության մեջ 19-րդ դարի 70-80-ական թթ.։ Եր., 1991, էջ 168։

⁶⁵ Կիսրուր Ա., Պատմություն Ս. Գ. Հնչակյան կուսակցության։ Բեյրութ, 1962, էջ 22։

Հայ քաաերական մաքի և ժամանակակից հայ քաաերնի սաեղծման քնագավա-
ռում դժվար է գերագնահատել Մոսկվայի համալսարանի հայ ուսանողության հիմ-
նած քաաերնի դերը: Այն իր նշանակությամբ և խաղացած դերով մեծապես դուրս ե-
կավ համալսարանական շրջանակներից՝ սկիզբ դնելով հայ քաաերնի նոր շրջանի
սլաամությանը: Ժամանակակիցները մեծ խանդավառությամբ են ընդունել նրա
գործունեությունը՝ այն համարելով «ագգանվեր գործ և սլաամական իրադարձու-
թյուն»⁷⁰:

Ի մի քերելով վերևում աավածը՝ կարելի է եզրակացնել, որ հայ երիտասարդու-
թյան մի սավար հասաված, ուսանելով վերանիշյալ համալսարաններում, ժամանակի
լավագույն, եվրոպական մակարդակի կրթություն սաանարուց գաա, սարել է լիա-
բյուն մշակութային և հաաարակական-քաղաքական կյանք, սերա կապի մեջ է եղել
հայրենիքի հեա, մաաեղգվել է ագգային խոեելով ու խնդիրներով և, դասաիրակ-
վելով դրաես ագգային մաավորական, իր ծանրակշիւ ալանդն է ներյուել հայ գի-
տության, մշակույթի և քաղաքական մաքի գարգացման անդատաանը:

ՎԵՐՋՆԱԲԱՆՈՒՄ հանրագումարի են բերված աաեհախատության հիմնական
եզրակացությունները:

Աաեհախատության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հեաևյալ
հաղվածներում.

1. Մոսկվայի և Պեաերբուրգի համալսարանների հայ ուսանողությունը 19-րդ դա-
րի երկրորդ կեսին (քվային, աղիալական և նեղխնել կազմը):

ՀՀ ԳԱԱ «Լրաեր» հաաարակական գիաությունների, 1988 թ., հ. 1, էջ 11-19:

2. Հայ ուսանողության նյութական վիճակն ու միջոցները Մոսկվայի և Պեաեր-
բուրգի համալսարաններում (19-րդ դարի երկրորդ կես):

«Լրաեր» հաաարակական գիաությունների, 1988 թ., հ. 12, էջ 62-71:

3. Հայագիաության դասավանդումը Պեաերբուրգի համալսարանում (19-րդ դարի
երկրորդ կես):

«Լրաեր» հաաարակական գիաությունների, 1996 թ., հ. 1, էջ 71-84:

⁷⁰ «Մերո Հայաստանի» 1859, հ. 9, էջ 1

МАНУКЯН Б. Б.
РОЛЬ ПЕТЕРБУРГСКОГО И МОСКОВСКОГО
УНИВЕРСИТЕТОВ В ПОДГОТОВКЕ АРМЯНСКОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ
(ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В.)

Резюме

Русско-армянские культурные связи имеют многовековую историю и яви-
лись предметом изучения многих исследователей. Хотя выявление роли
российских, в частности, Московского и Петербургского университетов в де-
ле подготовки восточноармянской интеллигенции было одним из важных ас-
пектов вышеуказанных связей, однако данная проблема до сих пор не ста-
ла предметом специального исследования.

Настоящая диссертация посвящена изучению различных аспектов выше-
названной темы, что нашло отражение в ее введении, четырех главах и зак-
лючении.

В первой главе осяцены положительные сдвиги, имевшие место в вос-
точноармянской действительности как в экономическом, так и в культурном
плане после присоединения Восточной Армении к России. Вследствие этих
сдвигов создались реальные предпосылки для обучения армянской молоде-
жи в российских вузах.

Во второй главе в основном исследованы численность, социальный и ре-
гиональный состав студентов-армян Петербургского и Московского универ-
ситетов. При этом предметом специального изучения стали также вопросы
материального положения армянских студентов этих университетов.

Третья глава посвящена вопросам преподавания арменоведения на ка-
федре армянского языка и истории Петербургского университета, состоя-
нию разработки тем по арменоведению.

В четвертой главе исследована общественно-политическая и культурная
жизнь армянских студентов Московского и Петербургского университетов.
Вопросом специального освещения стали студенческие кружки, земля-
чества, кассы взаимопомощи и литературно-издательская деятельность
студентов.

В заключении обобщены основные итоги диссертационной работы.